

Շրջանակային համաձայնագիր Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամի միջև

Սույն շրջանակային համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») կնքվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության (այսուհետ՝ «ՀՀ ԲՆ») և Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամի (այսուհետ՝ «ԿՊՏՀ») միջև:

ԿՊՏ Հիմնադրամն ստեղծվել է ըստ Հեսսենի (Գերմանիա) օրենքների:

Հաշվի առնելով, որ՝

- ԿՊՏՀ-ի առաջնային նպատակն է դրամաշնորհներ հատկացնելը Կովկասի էկոտարածաշրջանի հիմնական երկրների՝ (այսուհետ՝ «Հիմնական երկրներ») Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի Առաջնային պահպանվող տարածքների (այսուհետ՝ «ԱՊՏ-ներ») Հավելված Ա-ում սահմանված ընթացիկ ծախսերը հոգալու համար,
- ԿՊՏՀ-ը կարող է նաև դրամաշնորհներ հատկացնել՝ «ԱՊՏ-ների կառավարման պլանների մշակման և վերանայման որոշակի ծախսերի ֆինանսավորման համար,
- կողմերը ցանկանում են կնքել սույն Համաձայնագիրը և հիմքեր ստեղծել ԿՊՏՀ-ի նպատակը Հայաստանի Հանրապետությունում իրագործելու համար,

սույնով համաձայնեցվում է հետևյալը:

§1. Համաձայնագրի սահմանումները

Սույն Համաձայնագրում տեղ գտած և տեքստում չսահմանված հիմնական հասկացություններն ունեն Հավելված Ա-ում շարադրված նշանակությունը:

§2. Դրամաշնորհներ՝ օժանդակելու ԱՊՏ-ների Ընթացիկ ծախսերը

«ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ «ՊՈԱԿ-ներ») Ընթացիկ ծախսերը հոգալու համար դրամաշնորհները հատկացվում են համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի (այսուհետ՝ «Նախարարի») կողմից լիազորված անձի/կազմակերպության և ԿՊՏՀ-ի գործադիր տնօրենի (այսուհետ՝ «Գործադիր տնօրեն») կամ նրա անունից լիազորված անձի կողմից դրամաշնորհների վերաբերյալ հաստատված և ստորագրված համաձայնագրերի: Ծրագրի նախնական փուլում Նախարարի կամ նրա կողմից լիազորված անձի և «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ղեկավարության կողմից դրամաշնորհային համաձայնագրերը կարող են ստորագրվել միայն սույն համաձայնագրի 2.2-ի համաձայն ներկայացված դրամաշնորհային առաջարկը ԿՊՏՀ-ի տնօրենների խորհրդի (այսուհետ՝ «Տնօրենների խորհուրդ») կողմից հաստատելուց հետո:

Սույն Համաձայնագիրը չպետք է պարտավորեցնի ԿՊՏՀ-ին դրամաշնորհ տրամադրել և ոչ էլ ՀՀ ԲՆ վերապահել իրավասություն՝ դիմելու ցանկացած դրամաշնորհ ստանալու նպատակով: ԿՊՏՀ-ի դրամաշնորհ տրամադրելու և դրամաշնորհների հետ կապված ՀՀ ԲՆ պարտականությունները ծագում են միայն դրամաշնորհային համաձայնագրերի (այսուհետ՝ «Դրամաշնորհային համաձայնագրեր») հիման վրա:

2.1 Գրամաշնորհի տրամադրման տևողություն, համաֆինանսավորման պահանջներ: Ընթացիկ ծախսերի համար տրվող դրամաշնորհները կարող են ապահովել «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ընթացիկ ծախսերի մի մասը՝ առավելագույնը երեք տարի կամ Խորհրդի կողմից որոշված ավելի երկար ժամանակահատվածով՝ տեղեկացնելով ՀՀ ԲՆ-ին:

Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար դրամաշնորհները կտրամադրվեն համաֆինանսավորման հետևյալ պահանջները բավարարելու պայմանով: ՀՀ ԲՆ պարտավոր է (ուղղակի կամ ոչ ԿՊՏՀ-ի աղբյուրների միջոցով)՝

- (i) ապահովել Ընթացիկ ծախսերի ֆինանսավորումը առնվազն ԿՊՏՀ-ի կողմից առաջարկված ֆինանսավորման գումարի չափով,
- (ii) նախքան ԿՊՏՀ-ին դրամաշնորհի պահանջ ներկայացնելը՝ առնվազն մեկ տարի որպես պահպանվող տարածքներ գործող ԱՊՏ-ների համար, շարունակել (հաշվի առնելով սղաճը) ՀՀ ԲՆ կողմից ներկայացվող «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների Ընթացիկ ծախսերի տարեկան ֆինանսավորումը՝ ընթացիկ տարվա և նախորդ երկու տարիների ֆինանսավորման մակարդակին հավասար կամ գերազանցող չափով,
- (iii) ապահովել «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների բյուջեով սահմանված և Ընթացիկ չհաղիսացող ծախսերի ֆինանսավորումը:

Խորհուրդը կարող է չկիրառել այս համաֆինանսավորման պահանջները ԿՊՏՀ-ի կանոնադրության մաս 17-ի (c) կետով նախատեսված դեպքերում:

2.2 Գրամաշնորհային առաջարկներ

- (i) Առաջարկի հիմնական պահանջները: «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների Ընթացիկ ծախսերը մասնակիորեն ֆինանսավորող դրամաշնորհի ցանկացած առաջարկ (այսուհետ՝ «Գրամաշնորհային առաջարկ») պետք է ներառի՝
 - (a) Ողջամիտ չափով մանրամասներ պարունակող գործունեության կամ աշխատանքային ծրագիր (այսուհետ՝ «Գործունեության ծրագիր») դրամաշնորհի ստացման առաջին տարվա համար (այսուհետ՝ «Բազային տարի»),
 - (b) Բազային տարվա և հետագա երկու տարիների համար «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների նախատեսված եկամուտները և ծախսերը արտացոլող բյուջե (այսուհետ՝ «Բյուջե»), որը կներառի նաև ՀՀ ԲՆ (և/կամ այլ ֆինանսական աղբյուրների) և ԿՊՏՀ-ի կողմից ֆինանսավորման չափերը՝ վերը նշված մաս 2.1-ի սկզբունքների համապատասխան,
 - (c) Կառավարման պլան:

Խորհուրդը կարող է չկիրառել Կառավարման պլանի անհրաժեշտությունը, սակայն միայն ԱՊՏ-ների սկզբնական դրամաշնորհի համար: Յուրաքանչյուր դրամաշնորհ, որը համաձայնեցվել է առանց Կառավարման պլանի, պետք է պարունակի «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ղեկավարության և ՀՀ ԲՆ միջև

ստորագրված համաձայնագիր՝ դրամաշնորհի վերահաստատման համար տրվող դիմումի հետ մեկտեղ Կառավարման պլան ներկայացնելու վերաբերյալ:

- (ii) Գործունեության ծրագրի, Բյուջեի և Կառավարման պլանի ստանդարտներ: Որոշելու համար, թե Գործունեության ծրագրի, Բյուջեի և Կառավարման պլանի ստանդարտները բավարար են Սույն Համաձայնագրի պայմանների ներքո դրամաշնորհի տրամադրման նպատակների համար, Խորհուրդը կօգտագործի իր կողմից պարբերաբար հրապարակվող արդյունավետության ստանդարտներ: Սկզբնական ստանդարտները, որը Խորհուրդը կօգտագործի Գործունեության ծրագրերի, Բյուջեների և Կառավարման պլանների գնահատման համար, շարադրված են Բ, Գ և Դ Հավելվածներում և կարող են փոփոխվել ԿՊՏՀ-ի կողմից ըստ անհրաժեշտության: ԿՊՏՀ-ն անմիջապես կտրամադրի Նախարարությանը ցանկացած վերանայված ձև (իր ինտերնետային կայքում հրապարակման կամ Նախարարությանն այլ կերպ պատշաճ ծանուցման ձևով):
- (iii) Չև և Ժամկետ: ԿՊՏՀ-ի կողմից հնարավոր ֆինանսավորում ստանալու համար «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների Ընթացիկ ծախսերի համար Դրամաշնորհային առաջարկը պետք է ներկայացվի «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ղեկավարության և ՀՀ ԲՆ կողմից՝ հիմք ընդունելով ԿՊՏՀ-ի կողմից պարբերաբար հրապարակվող ձևը: Դրամաշնորհային առաջարկը պետք է ներկայացվի Խորհրդի կողմից հաստատման ժամկետից առնվազն երեք ամիս առաջ:

ԿՊՏՀ-ին իրավունք է վերապահվում վերանայել և հաստատել Բյուջեի և դրա այլ բաղադրիչների, Գործունեության ծրագրի, Կառավարման պլանի և Դրամաշնորհային առաջարկի ֆինանսավորման մակարդակները: ԿՊՏՀ-ն Դրամաշնորհային առաջարկը մաս 2.2-ի պահանջների համաձայն գնահատելիս նկատի կունենա նյութի համապատասխանությունը (բովանդակության առաջնայնությունը ձևակերպման նկատմամբ): Եթե պահանջվող տեղեկատվությունը ներառված լինի ներկայացվող փաստաթղթերից որևէ մեկում, այն կդիտարկվի որպես սույն Համաձայնագրի նպատակներին համապատասխան:

2.3 Դրամաշնորհային համաձայնագրեր: «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար Դրամաշնորհային համաձայնագրերը պետք է ներառեն նաև դրույթներ ՊՏՀ-ին ներկայացվող հաշվետվությունների, վճարման ժամկետների, պայմանների, և մեխանիզմների, մատչելիության, համագործակցության և համաձայնեցման ենթակա այլ հարցերի վերաբերյալ: Սկզբնական դրամաշնորհը հատկացնելիս ԿՊՏՀ-ն և ՀՀ ԲՆ պետք է համաձայնության գան դրամաշնորհային համաձայնագրի ձևի վերաբերյալ, որը կարող է նմուշ հանդիսանալ հետագա համաձայնագրերի համար: ԿՊՏՀ-ն և ՀՀ ԲՆ ակնկալում են, որ սկզբնական Դրամաշնորհային համաձայնագրի դրույթների հիմքում կլինեն Հավելված Ե-ում նշված դրույթները:

§3. Դրամաշնորհներ՝ օժանդակելու Կառավարման պլանի մշակման և վերանայման ծախսերին

3.1 Կառավարման պլանի մշակման և վերանայման ծախսեր: Ենթադրվում է, որ մի շարք ԱՊՏ-ներ չունեն համապատասխան միջոցներ և հզորություններ ի վիճակի չեն լինելու մշակել ՀՀ օրենսդրությանը և ԿՊՏՀ-ի ստանդարտներին համապատասխանող Կառավարման պլաններ, ինչպես նշվում է Հավելված Դ-ում, և պլանի մշակման համար կպահանջվի փորձագետների մասնակցությունը: ՀՀ ԲՆ և «ԱՊՏ»-ների պահպանությունը

իրականացնող ՊՈԱԿ-ների կողմից Կառավարման պլանի կամ դրա որևէ հատվածի նախապատրաստմանն աջակցելու համար ներգրավված փորձագետների վարձատրությունն ու ծախսերը (ներառյալ պլանների անգլերեն լեզվով թարգմանելու ծախսերը) այսուհետ կանվանվեն «Պլանների մշակման ծախսեր»:

ԿՊՏՀ-ն կարող է ֆինանսավորել՝ «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու նպատակով, Դրամաշնորհային առաջարկի հետ ներկայացվող Պլանի մշակման ծախսերի մինչև 50 տոկոսը: ՀՀ ԲՆ պարտավոր է ֆինանսավորել կամ երրորդ կողմ ներգրավել ծախսերը համաֆինանսավորելու համար:

Պլանի մշակման ծախսերը ֆինանսավորելու համար ԿՊՏՀ-ի դրամաշնորհները տրամադրվում են համաձայն Գործադիր տնօրենի և նախարարի (կամ լիազորված անձի) կողմից հաստատված և ստորագրված Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային համաձայնագրի՝ սույն Համաձայնագրի Բաժին 3.3-ում սահմանված պահանջներին համապատասխան որին, համաձայն Բաժին 3.2-ի, հետևում է ՀՀ ԲՆ և «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների ղեկավարության կողմից ներկայացված դրամաշնորհային առաջարկի (այսուհետ՝ «Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկ») հաստատումը Խորհրդատուի կողմից:

3.2 Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկներ: Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկը ԿՊՏՀ-ից կֆինանսավորվի, եթե բավարարվեն հետևյալ պահանջներին՝

- (i) Կառավարման ծրագրի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկը պետք է ներկայացվի համապատասխան «ԱՊՏ»-ների պահպանությունը իրականացնող ՊՈԱԿ-ների և Նախարարության կողմից՝ համաձայն ԿՊՏՀ-ի կողմից պարբերաբար հրապարակվող Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկի ձևի:
- (ii) Խորհրդատուի ընտրությունը պետք է կատարվի ՀՀ ԲՆ և ԿՊՏՀ-ի կողմից նախապես հաստատված խորհրդատուների ցանկից: Խորհրդատուին տրամադրվում է համաձայնեցված Տեխնիկական առաջադրանք, և
- (iii) Տեխնիկական առաջադրանքը պետք է տրամադրվի Խորհրդատուների համաձայնեցված ցուցակից առնվազն երեք հնարավոր թեկնածուներին, և համապատասխան առաջարկները պետք է ներառվեն Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային առաջարկի մեջ:

3.3 Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային համաձայնագրեր: Կառավարման պլանի մշակման ծախսերի դրամաշնորհային համաձայնագրերը էությանը և ձևով պետք է բավարարեն ԿՊՏՀ-ի պահանջներին և ձևերին: Մասնավորապես՝

- (i) Ընդհանուր համաձայնեցված բյուջեն և ծրագրի մշակման ծախսերի հարաբերակցությունը հաստատվում է նախարարության (և/կամ այլ ոչ-ԿՊՏՀ աղբյուրի) և ԿՊՏՀ-ի (ոչ ԿՊՏՀ աղբյուրներից առնվազն 50 տոկոսը ապահովելու պայմանով) կողմից:
- (ii) Պետք է ներգրավված լինեն ծառայություններ մատուցողները:

§ 4. Սահմանափակ ռեսուրսների հատկացում

Սկսած 2009թ-ից, յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 31-ից ոչ ուշ, ԿՊՏՀ-ն յուրաքանչյուր երկրին կտրամադրի դրամաշնորհների ընդհանուր նախահաշիվը՝ 14 ամիս հետո սկսվող օրացուցային տարում Դրամաշնորհային առաջարկները ներկայացնելու համար (2009թ. հոկտեմբերի 31-ից ոչ ուշ տրամադրվող նախահաշվի դեպքում՝ 2010 թվականին): Նման ծանուցումը առանձին կներառի դրամաշնորհների համար նախատեսված այն գումարները, որոնք ստացվել են որոշակի երկրում օգտագործման համար նշված նվիրատվություններից: Յուրաքանչյուր հաջորդող տարվա մինչև հունիսի 30-ը ԿՊՏՀ-ը կտեղեկացնի ՀՀ ԲՆ-ին նախահաշիվների մեջ հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

Համաձայն սույն մաս 4-ի առաջին պարբերության՝ հաշվարկված գումարները ողջամիտ նախահաշիվ են հանդիսանում և ԿՊՏՀ-ն պատասխանատվություն չի կրում, եթե իրականում դրամաշնորհների գումարները ավելի քիչ լինեն, քան նախապես հաշվարկված գումարները:

Եթե ԿՊՏՀ-ն բավականաչափ ֆինանսական ռեսուրսներ չունենա աջակցելու բոլոր այն «ԱՊՏ»-ներին, որոնք ընդունելի դրամաշնորհային առաջարկներ են ներկայացրել որոշակի տարում, Խորհուրդը կորոշի, թե որ «ԱՊՏ»-ներին աջակցել՝ հիմք ընդունելով կանոնադրությամբ սահմանված դրամաշնորհների տրամադրման չափանիշները, որոնք են՝ անփոխարինելիությունը, ներկայացուցչությունը, հրատապությունը, իրագործելիությունը և տարածաշրջանային նշանակությունը, ինչն ավելի ամբողջականորեն շարադրված է Հավելված Զ-ում: ԿՊՏՀ-ն ժամանակ առ ժամանակ կտեղեկացնի ՀՀ ԲՆ-ին այս չափանիշներին առնչվող այլ հարցերի կամ փոփոխությունների վերաբերյալ:

§5. ԿՊՏՀ-ի առաքելության կարևորությունը Կառավարության համար

ՀՀ ԲՆ-ը հաստատում է ԿՊՏՀ-ի առաքելության կարևորությունը Հայաստանում և աջակցությունը բնապահպանության և կայուն զարգացման հետագա ընթացքին՝ հօգուտ Հայաստանի և նրա բնակիչների: ՀՀ ԲՆ-ը համաձայնվում է, անհատ, ինչպես նաև միջկառավարական և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող նվիրատուներին և գործընկերների հետ իր հարաբերություններում կարևորել մնան նվիրատուների և գործընկերների աջակցությունը ԿՊՏՀ-ին՝ ԿՊՏՀ-ի համար այդ նվիրատուներից նոր ֆինանսավորում ապահովելու համար:

§6. Այլ հարցեր

6.1. Իրավասություններ, Լեզու. Սույն Համաձայնագիրը և դրա հիման վրա կնքվող Դրամաշնորհային համաձայնագրերը կարգավորվում են Գերմանիայի Դաշնության օրենսդրությամբ՝ նույնիսկ երկու երկրների իրավական նորմերի միջև հակասությունների առկայության դեպքում: Դրանք կնքվում են անգլերեն և հայերեն լեզուներով: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին: Սույն Համաձայնագրից բխող բոլոր վեճերի կարգավորումը պատկանում է Մայնի Ֆրանկֆուրտի նահանգային դատարանի (Լանգեդիխթ) բացառիկ իրավասությանը:

6.2. **Ծանուցումներ.** Սույն Համաձայնագրի վերաբերյալ բոլոր ծանուցումները և հաղորդակցությունները պետք է կատարվեն գրավոր և ուղարկվեն ԿՊՏՀ-ին

Caucasus Protected Areas Fund
c/o Dr. Gaertner, Steuerberater
Tulpenhofstraße 18
63067 Offenbach
Germany
Գործադիր Տնօրենին

և ՀՀ ԲՆ՝

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010,
Հանրապետության հրապարակ,
Կառավարության 3-րդ շենք,
ՀՀ բնապահպանության նախարարին

6.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

6.4. **Փոփոխություններ.** Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն (ներառյալ սույն դրույթի փոփոխությունը) վավեր է, եթե կատարված է գրավոր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

6.5. **Ամբողջական համաձայնություն.** Սույն Համաձայնագիրը պարունակում է սույն Համաձայնագրի առարկայի վերաբերյալ կողմերի ամբողջական համաձայնություն և հանդես է գալիս նախկինում ձեռք բերված բոլոր այն համաձայնությունների, բանավոր և գրավոր հայտարարությունների և այլ իրավական համաձայնությունների (անկախ պարտավորեցնող կամ ոչ պարտավորեցնող բնույթից) փոխարեն, որոնք ձեռք են բերվել կողմերի կողմից սույնի շրջանակներում:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ կողմերը կնքեցին սույն Համաձայնագիրը.

ՀՀ բնապահպանության նախարարության
կողմից


Կովկասի պահպանվող տարածքների
Հիմնադրամի կողմից

ՍԱՍՎԵԼ ԱՍԻՐԻԱՆՅԱՆ

ԴԵՎԻԴ ՍՈՐԻՍՈՆ

Աշխատակազմի ղեկավար

Գործադիր տնօրեն



22 մայիսի 2009թ.

«Ընթացիկ ծախսեր» նշանակում է Առաջնային պահպանված տարածքը (ԱՊՏ) - ներքի ներքո շարունակական այն գործունեության արժեքը, որի նպատակն է բնական միջավայրերը պահպանել անփոփոխ, իսկ վայրի կենդանիների գլխաքանակը՝ կայուն, ինչպես նաև համոզվել, որ տվյալ պահպանվող տարածքի դասակարգին համապատասխանող նպատակներն իրականացվում են: Ընթացիկ ծախսեր են՝

- Աշխատողների աշխատավարձը և վերապատրաստման ծախսերը
- Տարածքը շարունակական կերպով պարեկելու և հսկելու համար անհրաժեշտ վառելիքի ծախսերը
- Անհրաժեշտ սարքավորումների և նյութերի գնումը և փոխարինումը, ներառյալ պարեկության և հսկման համար օգտագործվող ավտոմեքենաները
- Գրասենյակային ծախսերը
- Առկա ենթակառույցների և սարքավորումների պահպանման ծախսերը
- ՊՏ կառավարման գործունեությանը առնչվող հետազոտությունները
- Հասարակական տեղեկատվության տարածման և իրազեկության բարձրացման ծախսերը:

Ընթացիկ ծախսեր չհանդիսացող ծախսեր են՝ հողատարածքների նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքի ձեռքբերման, նոր կառույցների շինարարության կամ հին կառույցների ամբողջական վերանորոգման ծախսերը: Տարածքի վարձակալությունը ընթացիկ ծախս է համարվում:

Անհրաժեշտ է նաև, որպեսզի ընթացիկ ծախսերը համապատասխանեն պահպանվող տարածքի դասակարգին. օրինակ, այցելուների համար նախատեսված ենթակառույցների պահպանման արժեքը կարող է ընթացիկ ծախս հանդիսանալ ազգային պարկի համար:

Առաջնային պահպանված տարածքը հիմնական երկրների պահպանվող այն տարածքներն են՝

- որոնք մաս են կազմում 2006թ. մայիսին հրատակակված «Էկոտարածաշրջանային պահպանման ծրագիր Կովկասում» փաստաթղթով սահմանված համընդհանուր Առաջնային պահպանվող տարածքի, ներառյալ այդ փաստաթղթում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններն ու լրացումները.
- որոնց ներքո կատարվող գործունեությունը բնորոշ է Առաջնային պահպանվող տարածքների համար.
- որոնք օրինական և շարունակական կերպով պահպանվում են, հիմնականում, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը պահպանելու նպատակով (լինի դա ազգային պարկ, արգելոց, արգելավայր կամ բնության հուշարձան), և
- որոնք, Կովկասի էկոտարածքային պահպանման ծրագրի սահմանած բնագիտական առաջնահերթության վրա հիմնվելով, ԿՊՏՀ տնօրենների խորհուրդը ԿՊՏՀ-ի համար առաջնային պահպանվող տարածքներ է հայտարարել:

Գործունեության ծրագրերի նախնական չափանիշներ

1. Գործունեության ծրագրի կամ հավասարագոր փաստաթղթի (փաստաթղթերի) բովանդակության նկատմամբ պահանջներ

1.1. Գործունեության ծրագրի ծավալը և բովանդակությունը

Գործունեության ծրագիրը կամ հավասարագոր փաստաթուղթը (փաստաթղթերը) ներառում է՝

- վարչական անձնակազմի խնդիրներին վերաբերող այն աշխատանքները, որոնք ԱՊՏ վարչական անձնակազմը նախատեսում է իրագործել ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում, ինչպիսին են օրինակ՝ պարեկությունը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության պահպանումը, հսկողությունը, հողատարածքների կառավարումը, քարտեզագրությունը, տուրիզմի և հանգստի կազմակերպումը, հասարակական իրազեկության բարձրացումը, հասարակության հետ կապերը և նմանատիպ այլ ծրագրերը, հիմնական և գործառնական միջոցները, սարքավորումների և տարածքի, մարդկային և ֆինասական ռեսուրսների կառավարումը, գործնական կազմակերպումը.

- ծրագրավորված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ միջոցները:

1.2. Գործունեության և վարչական ծրագրերի տրամաբանական կապը:

ԱՊՏ-ների արդյունավետ կառավարման ծրագրի առկայության դեպքում կետ 1.1-ում նշված գործունեությունը պետք է հանդիսանա կառավարման ծրագրի իրականացումը, և գործունեության ծրագրով կամ հավասարագոր փաստաթղթով (փաստաթղթերով) նախատեսված գործունեության և վարչական ծրագրերի նպատակների և ռազմավարական գործողությունների (վարչական գործողությունների) միջև պետք է պարզ տրամաբանական կապ լինի:

Բյուջեների նկատմամբ նախնական պահանջներ

1. Բազային տարվա Եկամուտների բյուջեում (Բյուջեն սահմանված է Հավելված Ե-ում) եկամուտները պետք է տարբերակվեն ըստ պետական բյուջեի, ԿՊՏՀ և այլ աղբյուրների:

Ծախսերի բյուջեում պետք է տարբերակվեն կապիտալ և գործառնական ծախսերը, և հիմնավորված լինեն աշխատավարձը և գործառնական այլ ծախսերը (վառելիք, վերանորոգում, կոմունալ ծախսեր, վերապատրաստում, ուսուցման ծրագրեր և այլն): Ինչ վերաբերում է կապիտալ ներդրումներին, դրանք պետք է արտացոլեն այն ծախսերը, որոնք համարվում են Ընթացիկ ծախսեր, և այն ծախսները, որոնք Ընթացիկ ծախսեր չեն համարվում:

Եթե Բազային բյուջետային տարին նախատեսված է առկա Պահպանվող տարածքի և բոլոր բյուջետային տարիների համար, այն պետք է ներառի բացատրություններ ընթացիկ տարեկան բյուջեի հետ հիմնական տարբերությունների վերաբերյալ:

Եթե բյուջեով նախատեսվում է ԿՊՏՀ-ից գումարներ հատկացնել որոշակի Ընթացիկ ծախսերի համար, բյուջեն պետք է արտացոլի նշված ծախսերի այն մասը, որը ֆինանսավորվում է ոչ-ԿՊՏՀ աղբյուրներից, և այն մասը, որը ֆինանսավորվում է ԿՊՏՀ-ի կողմից:

Բոլոր բյուջետային տարիների, ինչպես նաև բազային տարվա համար դրամաշնորհի, բյուջետային ծախսերի ցանկացած վերանայում պետք է արտացոլվի ընթացիկ ծախսերի տեսքով ԿՊՏՀ-ի հետ համաձայնեցրած ծախսերին համապատասխան:

- (i) ԿՊՏՀ-ի կողմից նշանակված անկախ աուդիտորի կողմից ստուգում, և
- (ii) տեխնիկական վերազննում ԿՊՏՀ-ի նշանակված անկախ մասնագետների կողմից (պետք է ավարտվի և ԿՊՏՀ ներկայացվի տվյալ տարվա մայիսի 31-ից ոչ ուշ:

Վերազննման ծավալը որոշվում է ԿՊՏՀ-ի կողմից և կարող է ներառել կառավարման արդյունավետությունը, Կառավարման ծրագրի և Գործունեության ծրագրի իրագործումը, գործունեության և այլ նպատակների իրագործումը, ինչպես նաև Ղեկավարման ծրագրի և Գործունեության ծրագրի ընդհանուր իրականացումը):

Նման աուդիտի և տեխնիկական վերազննման համար անհրաժեշտ միջոցները կարող են հատկացվել ամբողջապես ԿՊՏՀ-ի միջոցներից: Չնայած վերոհիշյալի, ԿՊՏՀ-ը կարող է, իր հայեցողությամբ, անտեսել տարեկան տեխնիկական վերազննման բյուջետավորման ու կատարման պահանջը այն դեպքում, եթե նման զննումը կբյուջետավորվի և կկատարվի դրամաշնորհի երեք տարվա փուլի ընթացքում առնվազն մեկ անգամ:

2. Հաջորդող տարիները

Եկամուտների գծով, հաշվարկային բյուջեն պետք է արտացոլի նախատեսվող ԿՊՏՀ, պետական և այլ եկամուտները: Նախատեսվող գործունեության ծախսեր հանդիսացող Ընթացիկ ծախսերի պետական ֆինանսավորումը պետք է հավասար լինի՝ հաշվի առնելով դրամի արժեզրկումը, Բազային տարվա համար հաշվարկված նույն գումարին:

Ծախսերի գծով, հաշվարկային բյուջեն պետք է տարբերակի գործունեության և կապիտալ ծախսերը, բայց ծախսերը մանրամասնելու կարիք չկա: Այն պետք է ներառի Ընթացիկ բոլոր ծախսերը, ներառյալ Ընթացիկ բյուջեի մաս հանդիսացող Կապիտալ ծախսերը:

Հաշվարկային բյուջեն պետք է արտացոլի նաև նախահաշվարկային հիմքով ծախսերի կանխատեսումային աճը կամ նվազումը (առկայության դեպքում), որը հետևանքն է՝ (x) կանխատեսված սղաճի, կամ (y) ղեկավարության ծրագրով նախատեսված ԱՊՏ-ների փոփոխության (ինչպես օրինակ՝ նոր կառույցների շահագործման հետ կապված անձնակազմի կամ պահպանման ծախսերի աճ): Նման հաշվարկային բյուջեն պետք է ներառի ենթադրվող սղաճի և Բազային տարվա կամ նախորդ տարվա հետ համեմատ ցանկացած այլ հիմնական տարբերությունների բացատրություն:

**Կառավարման և գործառնական ծրագրերի (կամ հավասարագոր փաստաթղթերի)
ներկայացվող պահանջները ԿՊՏՀ դրամաշնորհների համար**

1. Պահանջներ Կառավարման ծրագրավորման գործընթացին

1.1 Մասնակցություն

1.1.1 Կառավարման ծրագրի կանխատեսման, նպատակների և ռազմավարական գործողությունների (Կառավարման գործողությունների) պատրաստման գործընթացում տեղական համայնքների և այլ ԱՊՏ բնական ռեսուրսներն օգտագործող անձանց ներգրավում:

1.1.2 կանխատեսումների, նպատակների և ռազմավարական գործողությունների (Կառավարման գործողությունների) ընդունում՝ դրանց պատրաստմանը մասնակցող անձանց փոխհամաձայնությամբ:

1.2 Խորհրդակցություն

1.2.1 Կառավարման ծրագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ անելու համապատասխան հնարավորության տրամադրում երկրում բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են ԱՊՏ Կառավարման գործընթացով, մինչև ծրագրի պաշտոնական հաստատումը: Համապատասխան հնարավորություն նշանակում է, որ պատասխանատու մարմինը փորձ է կատարել մարդկանց տեղեկացնելու, որ Կառավարման ծրագրի նախագիծը պատրաստ է հաշվի առնելու դիտողությունները, և որ հանրությանը ողջամիտ ժամանակ է հատկացվել դիտողություններ ներկայացնելու համար:

1.2.2. Կառավարման ծրագրի պատրաստման վերջին փուլում և նախքան պաշտոնական հաստատումը, պատշաճ ուշադրությամբ ուսումնասիրվել են Կառավարման ծրագրի նախագծին վերաբերող գրավոր բոլոր դիտողությունները:

2. Պահանջներ Կառավարման ծրագրի բովանդակությանը

2.1 Շարունակականություն

Կառավարման ծրագիրը շարունակում է լինել ընթացիկ և հիմնավորված, որպես ԱՊՏ-ի կառավարման համար բոլոր էական առումներով ուղեցույց:

2.2 Տարածքային շրջանակներ

Եթե ԱՊՏ-ն ունի պահպանման (բուֆերային) գոտի, ապա Կառավարման ծրագիրը վերաբերում է նաև այդ օժանդակ գոտու Կառավարմանը:

2.3 Նկարագրություն

Կառավարման ծրագիրը ներառում է տարածքի առանձնահատկությունների նկարագիրը (բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, մշակութային, պատմական և հասարակական-տնտեսական նկարագիր), ինչպես նաև պահպանվող արժեքների տարածքային և միջազգային կարևորությունը, տարածքի օգտագործման մեթոդները, դրանց օրենսդրական և կառավարման շրջանակները: Նկարագրությունը պետք է ներառի նվազագույնը Հավելված 1-ում նշված տեղեկությունները:

2.4 Հեռանկար/Տեսլական

Կառավարման ծրագիրը ներառում է Հեռանկար/տեսլական, որը նկարագրում է ԱՊՏ-ի (ինչպես նաև պահպանման գոտու առկայության դեպքում) ակնկալվող վիճակը 20-50 տարի հետո: Հեռանկարը պարունակում է մանրամասներ, խնդիրներ (նպատակներ) և ռազմավարական գործողությունների մշակման համար հիմքեր և պետք է

լինի հակիրճ, որպեսզի դյուրին և հասկանալի լինի ցանկացած անհատի համար, ով հետաքրքրված է ԱՊՏ-ներով:

2.5 Գոտիավորման քարտեզ

2.5.1 Այդ դեպքում, եթե ազգային օրենքը նման պահանջ է դնում, և եթե ցանկացած ազգային պարկին կամ այլ պահպանվող տարածքին շնորհվում է IUCN II, կամ ավելի ցածր դասին համարժեք կարգավիճակ, ապա Կառավարման ծրագիրը պետք է ընդգրկի Գոտիավորման քարտեզ:

2.5.2 Գոտիավորման քարտեզ սահմանում է նվազագույն այն գոտիները, որոնք պահանջվում են ազգային օրենսդրությամբ, և ներառում է հատուկ պաշտպանության գոտի, որտեղ մարդկային գործունեությունը սահմանափակվում է գիտական ուսումնասիրություններով:

2.5.3 Գոտիավորման քարտեզ սահմանում է ԱՊՏ-ի այն հատվածները, որտեղ ԱՊՏ պաշարների ավանդական օգտագործումը կշարունակվի ռազմավարական գործողությունների (Կառավարման գործողությունների) միջոցով գոտիավորման ծրագրի կամ Կառավարման ծրագրի մեկ այլ մասում նկարագրված որոշակի կանոնների ընդունման պայմանով:

2.5.4 Գոտիների և դրանց սահմանների ընտրությունը պետք է ապահովի տարածքի էկոլոգիական պահպանումը՝ միևնույն ժամանակ պահպանման հետ համատեղելով մարդկային գործունեությունը:

2.5.5 Եթե Կառավարման ծրագիրը առաջինը չէ դրանաշնորհի դիմում ներկայացրած ԱՊՏ-ի համար, ապա ծրագիրը ներառում է նախորդ Կառավարման ծրագրի մեջ ներկայացված գոտիավորման ծրագրի արդյունավետության ամփոփ գնահատականը, և այդ գնահատականին պատշաճ ուշադրությամբ վերաբերվելու ապացույցը:

2.6 Նպատակներ և ռազմավարական գործողություններ

2.6.1 Կառավարման ծրագիրը սահմանում է նպատակներ, որոնք ԱՊՏ ղեկավարությունը պետք է իրականացնի ծրագրի իրագործման ընթացքում, և ռազմավարական գործողություններ (Կառավարման գործողություններ), որոնց միջոցով նախատեսվում է իրագործել նշված նպատակները:

2.6.2 Նպատակները պետք է անդրադառնան առնվազն հետևյալին՝

- վարչական մարմինների զարգացում
- ԱՊՏ-ի բուսական և կենդանական աշխարհի բազմազանության պահպանում
- Պահպանման գոտու տարածքներում (որտեղ կիրառելի է) կայուն ապրուստի միջոցների մշակում, զարգացում
- այցելությունների կառավարում (որտեղ կիրառելի է):

2.6.3 Նպատակները և ռազմավարական գործողությունները (Կառավարման գործողությունները) հիմնված են պատճառների և հետևանքների համակարգի նկարագրության վրա, որոնք սահմանում են ԱՊՏ-ի առաջիկա վիճակը: Պատճառների և հետևանքների համակարգի նկարագրությունը հնարավորինս օգտագործում է, Կառավարման ծրագիրը կազմելու ժամանակ, ծրագրավորման թիմին հասանելի (ներառյալ տեղական բնակչության կողմից տնօրինվող) տեղեկությունները:

2.7 Դիտանցի ծրագիր

2.7.1 Կառավարման ծրագիրը ներառում է Դիտանցի ծրագիր, որը՝

- թվարկում և բացատրում է այն ինդիկատորների ընտրության հիմնավորումը, որոնք որպես հիմք կօգտագործվեն որոշելու համար, արդյո՞ք Կառավարման ծրագրի իրականացումը հաջողվել կամ ձախողվել է և ձախողման պատճառները:

- նկարագրում է գնահատման համար օգտագործվող տեղեկությունների աղբյուրները.
- պատասխանատվություն է սահմանում տեղեկատվության հավաքագրման և դասակարգման համար:

2.8 Վերանայման փուլ

Կառավարման ծրագրի մեջ նշվում է ծրագրի վավերության ժամկետը, վերանայման և փոփոխման վերջնաժամկետը և վերանայման և փոփոխման համար պատասխանատու մարմինը:

Հավելված 1: Կառավարման ծրագրի համար անհրաժեշտ տեղեկությունները

Կորպորատիվ տեղեկություններ

- Վայր
- Տարածք
- IUCN ՊՏ դաս
- Իրավական կարգավիճակ
- Կազմակերպական կառուցվածք
- Վարչական կառուցվածք

Ֆիզիկա-աշխարհագրիտական տեղեկություններ

- Կլիմա
- Հիդրոլոգիա
- Երկրաբանություն

Կենսաբանական տեղեկություններ

- Բնապատկեր և բնական միջավայրեր
- Բուսական աշխարհ
- Կենդանական աշխարհ

Հասարակական և մշակութային տեղեկություններ

- Բնակավայրեր և բնակչություն
- Հողի ընթացիկ օգտագործում (ավանդական օգտագործում, արածեցում)
- Սեփականության (օգտագործում, վարձակալություն) իրավունք, օգտվելու հնարավորություն, այլ պայմաններ և սահմանափակումներ
- Տնտեսական գործունեություն

Պատմական ակնարկ

- Հնագիտություն
- Պատմական վայրեր

Դրամաշնորհային պայմանագրերի հիմնական դրույթներ

1. **Հաշվետվություն:** ԱՊՏ կառավարման ծրագրերն ու բյուջեներն ենթակա են հաստատման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պայմանով, որ դրանց նախագծերը նախապես գրավոր համաձայնեցվել են ՊՏՀ հիմնադրամի հետ: ՊՏՀ հիմնադրամին մանրամասն գրավոր հաշվետվություններ պետք է ներկայացվեն: Կառավարման ծրագրի հաշվետվությունները պետք է հաստատված լինեն ԱՊՏ տնօրենի կողմից իսկ Բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ նախարարի տեղակալի և ԱՊՏ տնօրենի կողմից:

(i) Մինչև յուրաքանչյուր տարվա վերջը նախապես համաձայնեցված ժամկետը, սկսած Բազային տարվանից՝

(a) նոր Գործառնական ծրագիրը և Բյուջեն՝ հաջորդ տարվա համար (“Բյուջե”), որը համապատասխանում է Շրջանակային համաձայնագրի բաժին 2.2-ին և կազմված է Բազային տարվա գործունեության ծրագրի և Բյուջեի բնօրինակի ձևով (բացառությամբ նրա, որ Բյուջեն պետք է ընդգրկի միայն Բյուջետային տարին և դրան հաջորդող տարին), և

(b) Բյուջեի դեպքում, ցանկացած նշանակի փոփոխություններ նախորդ Բյուջեի տարվա հետ համեմատ:

(c) Կառավարման ծրագրի և ընթացիկ տարվա Գործունեության ծրագրի մեջ նշված գործունեության, պահպանման և այլ նպատակների իրագործման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:

(ii) Դրամաշնորհի ժամկետի յուրաքանչյուր տարվա ավարտից հետո հինգ ամսվա ընթացքում, տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվությունը՝ տվյալ տարվա համար՝ նույն տարվա բյուջեում նշված ձևով կազմված, ստորև շարադրված կերպով ստուգված, և Բյուջեից ցանկացած նշանակալի տարբերությունների վերաբերյալ բացատրություններ պարունակող:

2. **Վճարման ժամկետները:** Եթե որևէ այլ համաձայնություն չկա, դրամաշնորհները կբաշխվեն տրանշերով՝ երեք տարվա ընթացքում, սովորաբար յուրաքանչյուր կիսամյակ հավասար տրանշերով՝ նախօրոք սահմանված օրերին:

3. **Վճարման պայմանները.** Եթե որևէ այլ համաձայնություն չկա, դրամաշնորհների վճարման պայմանները կներառեն, բացի այլից, հետևյալ սկզբունքի վրա հիմնված պայմանները՝

(i) *Մտաջին վճարում:* ԿՊՏՀ-ն պետք է ստացած լինի՝

(a) (1) (i) կետով սահմանված պարտադիր հաշվետվությունները.

(b) ԱՊՏ-ի պաշտոնական բյուջեն, որը համապատասխանում է հաստատված Բյուջեին.

(c) նախարարության ֆինանսավորման ժամանակացույցը՝ Բազային տարվա /Բյուջեի համար.

(d) ոչ-ԿՊՏՀ ցանկացած ֆինանսավորման ժամանակացույցը Բազային տարվա /Բյուջեի համար.

(e) տեղեկատվություն նախարարությունից, որ (x) Նախարարությունը և ցանկացած այլ ոչ-ԿՊՏՀ աղբյուրները ֆինանսավորել են իրենցից ակնկալվող բոլոր գումարները Բազային/Բյուջետային և նախորդ տարվա ընթացքում և (y) ԿՊՏՀ-ի կողմից նախորդ տարվա համար տրամադրված ամբողջ ֆինանսավորումը ծախսվել է, և

(f) դրական կարծիք, սույն (i) կետի հետևանքով ներկայացված տեղեկությունների և հաշվետվությունների, ինչպես նաև ԿՊՏՀ գործադիր տնօրենի կամ իր կողմից

նշանակված անձանց կարծիքով առնչություն ունեցող այլ փաստերի հիման վրա, ԿՊՏՀ-ի ֆինանսավորման արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

(ii) *Երկրորդ վճարում:* ԿՊՏՀ-ն պետք է ստացած լինի՝

(a) ԱՊՏ եկամուտների և ծախսերի հաշվետվություն նախորդ տարվա վերաբերյալ, ստուգված ԿՊՏՀ-ի կողմից նշանակված աուդիտորների կողմից ըստ վերը շարադրված 1(ii) կետի և ներառյալ ԿՊՏՀ-ին բավարարող աուդիտորական եզրակացություն:

(b) տեղեկատվություն, որ Նախարարությունը և ցանկացած այլ ոչ-ԿՊՏՀ աղբյուրները ֆինանսավորել են Բազային/Բյուջետային տարվա ընթացքում իրենցից ակնկալվող բոլոր գումարները հունիսի 30-ից ոչ ուշ, և

(c) դրական կարծիք, սույն (ii) կետի հետևանքով ներկայացված տեղեկությունների և հաշվետվությունների, ինչպես նաև ԿՊՏՀ գործադիր տնօրենի կամ իր կողմից նշանակված անձանց կարծիքով առնչություն ունեցող այլ փաստերի հիման վրա, ԿՊՏՀ-ի ֆինանսավորման արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

4. Վճարման մեխանիզմները:

Վճարումները կատարվում են Նախարարության հատուկ հաշվին փոխանցելու միջոցով: Վերոգրյալ հաշիվը կօգտագործվի բացառապես ԿՊՏՀ-ից դրամաշնորհներ ստանալու և դրանք բաշխելու համար, և կղեկավարվի Դրամաշնորհի պայմանագրով համաձայնեցված կանոններով:

5. **Օգտագործման հնարավորություն:** ԱՊՏ-ն և Նախարարությունը ողջամիտ սահմաններում ԿՊՏՀ-ի ներկայացուցիչներին (ներառյալ ԿՊՏՀ-ի կողմից հրավիրված երրորդ անձանց) հնարավորություն կնձեռեն օգտագործել՝ (i) Նախարարության և ԱՊՏ-ի համապատասխան բոլոր ֆինանսական հաշվետվությունները, ԿՊՏՀ-ին հնարավորություն տալով պատշաճ կերպով ստուգել ԱՊՏ տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվությունները, և (ii) ԱՊՏ-ի տեխնիկական, գիտական և աշխատանքային փաստաթղթերը՝ ֆինանսավորման օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար:

7. **Համագործակցություն:** ԱՊՏ-ն և Նախարարությունը կհամագործակցեն՝ (i) ԿՊՏՀ-ի նշանակված աուդիտորների հետ, ԱՊՏ հաշիվները՝ տարին առնվազն մեկ անգամ, ստուգելու համար, որպեսզի ԿՊՏՀ-ն ֆինանսական հաշվետվությունների ստուգման արդյունքները ստանա տարեվերջից ոչ ավելի քան 5 ամիս հետո, և (ii) ցանկացած տեխնիկական խորհրդատուների հետ, որոնց ԿՊՏՀ-ն կարող է պարբերաբար նշանակել՝ Կառավարման արդյունավետությունը, Կառավարման և Գործունեության ծրագրերի պահպանման, գործունեության և այլ նպատակների կատարումը կամ Կառավարման և Գործունեության ծրագրերի ընդհանուր կիրառումը գնահատելու համար:

Եթե այլ պայմանավորվածություն չկա, նման աուդիտորների և տեխնիկական խորհրդատուների վարձատրությունը և ծախսերը կվճարվեն ԿՊՏՀ-ի տրամադրված և այդ նպատակի համար առանձնացված դրամաշնորհի գումարից:

8. **Չօգտագործված/սխալ օգտագործված գումարների վերադարձը:** ԱՊՏ-ն կամ նախարարությունը շտապ կերպով ԿՊՏՀ-ին կվերադարձնեն մինչև դրամաշնորհի ժամկետի ավարտը չօգտագործված դրամաշնորհի ցանկացած մնացորդը: ԱՊՏ-ն կամ նախարարությունը անհապաղ ԿՊՏՀ-ին կվերադարձնի սխալ օգտագործված կամ Կառավարման ծրագրով չնախատեսված նպատակների համար օգտագործված գումարը՝ սխալ կամ ոչ նպատակային օգտագործման փաստը հաստատելուց հետո:

9. **Հետագա անհամապատասխանությունը:** Դրամաշնորհի գումարը ոչ պատշաճ կերպով կամ Կառավարման ծրագրով չնախատեսված նպատակների համար օգտագործվելը ԱՊՏ-ին կզրկի հետագա դրամաշնորհներ ստանալու իրավունքից Խորհրդի կողմից սահմանված ժամկետով:

Ներկայում գործող դրամաշնորհների բաշխման չափանիշներ

Անփոխարինելիություն – Այն ԱՊՏ-ները, որտեղ կան համաշխարհային մակարդակով վտանգված և սահմանափակ տարածվածություն ունեցող տեսակներ: Ամենից անփոխարինելին այն ԱՊՏ-ներն են, որտեղ բնակվում է որևէ կենդանատեսակի ամենակենսունակ գլխաքանակը և/կամ պաշտպանվող տեսակների (այսինքն՝ IUCN Կարմիր Գրքի մեջ ընգրկված տեսակների) ամենամեծ գենետիկ բազմազանությունը.

Ներկայացուցչականություն – ԱՊՏ-ներ, որոնց նպատակն է ապահովել տվյալ էկոտարածքում բնածին (էնդեմ) տեսակների և միջավայրերի ամբողջ բազմազանության ներկայացուցչությունը էկոտարածքի պաշտպանված տարածքների համակարգի շրջանակներում.

Հրատապություն – ԱՊՏ-ներ, որոնք պահպանման հրատապ հնարավորություն են ներկայացնում, և/կամ որտեղ լուրջ վտանգներ են սպառնում բնածին (էնդեմ) և/կամ վտանգված տեսակներին և դրանց միջավայրերին.

Հավանականություն – ԱՊՏ-ներ, որոնք գտնվում են բարենպաստ տեղական և ռեգիոնալ միջավայրում, այսինքն՝ տեղական համայնքի աջակցության ապացույցներ ունեն, և

Տարածքային կարևորություն – ԱՊՏ-ներ, որոնք ի վիճակի են աջակցել և զարգացնել էկոտարածքային Պահպանման Ծրագրի ընդհանուր կիրառումը և արդյունավետությունը: